ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
«ՀԾ-ՀԱՇՎԱՊԱՀ 7» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ 25.04.2022թ. ԿՆՔՎԱԾ N «ԴԴ-ՄԱԾՁԲ-22/12» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«18» «11» 2022թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականություններ կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայկական Ծրագրեր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի (այսուհետ՝ Կատարող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 25.04.2022թ. կնքված N «ԴԴ-ՄԱԾՁԲ-22/12» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 4.1 կետում «2 022 000 (երկու միլիոն քսաներկու հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «2 127 000 (երկու միլիոն մեկ հարյուր քսանյոթ հազար) ՀՀ դրամ» բառերով:

1.2 Պայմանագրի 4.1.1 կետում «2 022 000 (երկու միլիոն քսաներկու հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «2 127 000 (երկու միլիոն մեկ հարյուր քսանյոթ հազար) ՀՀ դրամ» բառերով:

1.3 Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ում «տեխնիկական բնութագիրը» սյունակում «1/մեկ/ աշխատատեղի համար թվով 15 հատ «ՀԾ-Հաշվապահ 7» համակարգի սպասարկման ծառայություններ» բառերը փոխարինել «1/մեկ/ աշխատատեղի համար թվով 16 հատ «ՀԾ-Հաշվապահ 7» համակարգի սպասարկման ծառայություններ» բառերով:

1.4 Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ում «ՑԱՆԿ»-ի 2-րդ սյունակում՝ աշխատատեղերի հասցեները լրացնել հետևյալ նախադասությամբ. «ք.Երևան Թբիլիսյան խճուղի 3/9 (ՀՀ հակակոռուպցիոն դատարան)»:

1.5 Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն կնքվելիք համաձայնագրի Հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը 08.09.2022թ-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի Հավելված N 1 հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Չարենցի 1
ՀՎՀՀ՝ 00807555
Հ/Հ՝ 2500010002240100
«Արմսվիսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
« 18 » « 11 » 2022թ. կնքված N 1 համաձայնագրի
(Հավելված N 2
« 25 » ապրիլի 2022 թ. կնքված «ԴԴ-ՄԱԾՁԲ-22/12» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝*										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160/2	«ՀԾ-Հաշվապահ 7» համակարգի սպասարկման ծառայություններ		2 022 000	2 022 000	2 022 000	2 022 000	2 022 000	2 022 000	2 022 000	2 127 000	2 127 000	**2 127 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Չարենցի 1
ՀՎՀՀ՝ 00807555
Հ/Հ՝ 2500010002240100
«Արմսվիսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ